Երևանի պետական համալսարան

Շարունակական կրթության կենտրոն

«Գիտության ոլորտում կանանց և աղջիկների մասնակցության խթանում» ծրագիր

Բաց կանչ հետազոտողների համար

«Հայ կանայք գիտության ոլորտում» թեմայով գրքի և ցուցահանդեսի ստեղծում

Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) շարունակական կրթության կենտրոնը (ՇԿԿ) հայտարարում է **դրամաշնորհային մրցույթ՝ գիտության ոլորտում հայ կանանց վերաբերյալ գրքի և ցուցահանդեսի ստեղծման նպատակով**: Մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ հետազոտողներ և հետազոտական խմբեր:

Ակնկալվում է, որ գիրքը և ցուցահանդեսը ստեղծվելու է 2026թ. մարտ-հուլիս ամիսներին: Գրքի շնորհանդեսի և ցուցահանդեսի վերջնաժամկետը 2026թ. հուլիսի 15-ն է:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ **2026թ. մարտի 10՝ ժամը 24:00:**

«Գիտության ոլորտում կանանց և աղջիկների մասնակցության խթանում» ծրագիրն իրականացվում է Գերմանիայի կառավարության ֆինանսավորմամբ, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Ֆեմինիզմը գործողության մեջ հանուն համակարգային փոխակերպման (FAST)» և «Կանանց հզորացում հանուն բարեկեցության» (WoW) ծրագրերի շրջանակում:

Նպատակ

«Գիտության ոլորտում կանանց և աղջիկների մասնակցության խթանում» ծրագրի նպատակը երիտասարդ աղջիկների և կանանց շրջանում ԲՏՃՄ ոլորտների հանդեպ հետաքրքրության մեծացումն է՝ հետազոտության, իրազեկման, ոգեշնչող պատմությունների և օրինակների միջոցով:

Այս նպատակով նախատեսվում է հրատարակել գիրք գիտության ԲՏՃՄ ոլորտներում ներգրավված տարբեր սերունդների կանանց մասին՝ գիտական կառույցների ղեկավարներ, գիտաշխատողների, լաբորանտներ, ասպիրանտներ, ուսանողներ, դպրոցականներ և այլն: Գիրքը պետք է ներկայացնի ինչպես արխիվային հետազոտության միջոցով բացահայտված կանանց անձնական պատմությունները, այնպես էլ ժամանակակիցներինը՝ հարցազրույցների միջոցով:

Գրքում ընդգրկված պատմությունները, լուսանկարները, ինչպես նաև մի շարք այլ նյութեր, կներկայացվեն նաև ցուցահանդեսի միջոցով, որն այնուհետև կհյուրընկալվի ԵՊՀ թանգարանում:

Ո՞վ կարող է մասնակցել

Դրամաշնորհային մրցույթին կարող են մասնակցել այն հետազոտողները, որոնք ունեն արխիվային աշխատանքի, հարցազրույցներ վարելու, թանգարանային աշխատանքի, գիրք և/կամ ցուցահանդեսի տեքստեր գրելու/կազմելու փորձ և հմտություններ: Երկու-երեք հոգուց բաղկացած միջգիտակարգային հետազոտական թիմերի ներկայացրած հայտերը կունեան մրցութային առավելություն: Հետազոտական թիմում կարող են նաև ներգրավված լինել մագիստրատուրայի ուսանողներ:

Մրցույթի արդյունքում հանձանժողովի կողմից կընտրվի մեկ հայտ, որը ներկայացրել է մրցույթի պայմաններին համապատասխանող լավագույն առաջարկը:

Ֆինանսավորում

Ընտրված հետազոտական խումբը կամ անհատ հետազոտողը կստանա ֆինանսական աջակցություն հետզոտության և գրքի ու ցուցահանդեսի նյութերը պատրաստելու համար: Ֆինանսավորման չափը 1. 800. 000 ՀՀ դրամ է (հարկերը ներառյալ):

Գրքի և ցուցադրության ձևավորման ու տպագրության ծախսերը դրամաշնորհում ներառված չեն, դրանք կհոգա ԵՊՀ-ն՝ ծրագրային միջոցներից:

Իրականացման ժամանակացույց և ակնկալվող արդյունքներ

Ի՞նչ	***Ե՞րբ***
Գրքի նախնական հայեցակարգի վերջնականացում	30-ը մարտի, 2026 թ.
Արխիվային աշխատանք/հարցազրույցներ	Ապրիլ-մայիս, 2026թ.
Գրքի և ցուցահանդեսի նախնական տարբերակի ներկայացում	31-ը մայիսի, 2026 թ.

Գրքի և ցուցահանդեսի վերջնական տարբերակի ներկայացում	15-ը հունիսի, 2026 թ.
Գրքի շնորհանդես և ցուցահանդեսի կազմակերպում	15-ը հուլիսի, 2026 թ.

Ընտրության չափանիշներ

Հայտերը կգնահատվեն հետևյալ չափանիշներով՝

- առաջարկվող գրքի և ցուցադրության նախնական հայեցակարգի գրավչությունը, նորարարությունը և բովանդակային համապատասխանությունը ծրագրի նպատակներին- 50 միավոր,
- հայտատուի փորձը – 30 միավոր,
- հայտի ընդհանուր որակը – 20 միավոր:

Մրցույթին դիմելու կարգը

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել կից հայտադիմումը և ուղարկել cce@ysu.am էլեկտրոնային հասցեին մինչև **սույն թվականի մարտի 10-ը**՝ ժամը 24:00: Ավելի ուշ ներկայացված հայտերը չեն դիտարկվի:

Հարցերի դեպքում՝(374 60) 710 212 :